



Մարքը կառավարում է հմտցիաները, իսկ մտքերը՝ կարգում

18:13 | ԱՊՐԻԼ 15, 2011 | ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արի



Մասնաճյուղի կարողություններով մարդիկ, որոնք չեն կարողանում խոսել և շարժվել, կարող են հաղորդակցվել համակարգչային սարքի միջոցով: Գյուտի հեղինակը Բելգիայի կաթոլիկ համալսարանի նեյրոֆիզիոլոգիական բաժնի պրոֆեսոր Մարկ Վան Հյուլլըն է: Ըստ նրա՝ երկու տարի առաջ հայտնագործած սարքի միջոցով, որն արդեն էլ ավելի է կատարելագործել, կարելի է կարգալ մարդկանց մտքերը:

ԱՍ

ԵՎԸ
ԿԱՑ

ՊԱՇ
ՀԱՐԷ

ԱՄՆ

«Ա1+»-ի հետ գրույցում պրոֆեսորը նեեց, որ սարքը նախատեսված է հաղորդակցվել չկարողացող մարդկանց համար, սակայն արդեն կատարելագործված տարբերակով

նրանից կարող են օգտվել նաև առողջ մարդիկ՝ ռազմական և բազմաբնույթի նպատակներով:

Գյուտի հեղինակի խոսքերով՝ սարքը բավական մեծ հետաքրքրություն է առաջացրել մի շարք պետությունների համար. «Փանի որ շատ պետություններ են ինտեգրվել այս նախագծի մեջ մենք կարողացել են կատարելագործել սարքը: Եթե նախկինում այն իր բազմաթիվ լարերի շնորհիվ կարմարավետ չէր հիվանդի համար, այսուհետ հիվանդի գլխին հագցրած սարքն աշխատում է հեռակառավարմամբ»: Բացի այդ նա նեեց, որ նախնական տարբերակում գլխարկի մեջ հատուկ նյութ էր լցվում, էլեկտրոդներն աշխատեցնելու համար, այսօր արդեն այդ նյութն էլ չի լցվում:

Ըստ գիտնականի՝ սարքի աշխատանքը կայանում է նրանում, որ հիվանդի գլխին հագցրված դետեկտորը համակարգչի միջոցով հնարավոր է դարձնում նրա մտքում արտասանած բառերը տեսնել էկրանի վրա:

«Նոր տարբերակով հիվանդից բառը ընտրելու համար երկար ժամանակ չի պահանջվում, ու մի քանի րոպեում մենք կարող ենք իմանալ, թե ինչ է ուզում հիվանդը ասել: Օրինակ, եթե հիվանդը ցանկանում է ասել բարեւ, ներկայացված այբուբենում հայացքով ընտրելով Բ տառը, այն արդեն գրվում է, սակայն դա աշխատում է նաև T9 համակարգով, այսինքն բայից հետո համակարգիչը տարբերակներ է առաջարկում և անհրաժեշտ բառերն անմիջապես հիվանդը ընտրում է», - ասաց նա:

Մարքից օգտվող հիվանդներն առայժմ այնքան էլ շատ չեն՝ գնի պատճառով: Այն արժե 7000 եվրո. «Մեր նպատակն է սարքը հասանելի դարձնել դրա կարիքը ունեցող հիվանդներին և նրա արժեքը հասցնել 300 եվրոյի, որքան դա արժե անբերկյան տարբերակի նախափուլը», - ասաց նա:

ՄԱ

Պրոֆեսոր Մարկ Վան Հյուլլըն, բացի այս սարքից աշխատում է նաև մեկ այլ սարքի՝ մարդու էմոցիաները կառավարելու համակարգի վրա: Վերջինս ստեղծվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդ կարողանում է իր էմոցիաները կառավարել երաժշտությամբ. «Մենք տարբեր երաժշտություն ենք առաջարկում մարդուն և նրա ընտրությամբ մեր սարքի միջոցով հասկանում ենք, թե ինչ տեսակի էմոցիաների հետ գործ ունենն է դրա համար լուծում առաջարկում»:



One recommendation. [Sign Up](#) to see what your friends

[Share](#) |



© «A1Plus.am». Երաժշտությունը արտատպելիս, ամբողջական կամ մասնակի օգտագործելիս՝ հղումը «A1Plus.am»-ին պարտադիր է:



[ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՁ](#)

[ԼՐԱՀՈՍ](#)

[ՊԱՇՏՈՆԱԿԱՆ](#)

[ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ](#)

[ՀԱՍԱՐԱՆ](#)



«Ա1+» հեռուստաընկերություն, «Մեկտեմա ՍՊԸ»
Երևան, Բուզանդի 1/3, 5-րդ հարկ
+374(10) 58-54-27, 56-16-18(fax)
a1plus@a1plus.am

© «A1Plus.am», Հայաստան. Երա-
տմբողջական կամ մասնակի օգտագործ
վարտադիր է:

